ՆՈՐ-ԴԱՐ

№ 51 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ_աբաթ 2 Ապրիլի 1888 Հ_աբաթ 2 Ապրիլի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 51

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.,
ամիսը՝ 1 ր. 50 կ., Հատով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում վերևի խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
կամ՝ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. —Մի քահանայի բացատրական նամակը։

Քրոնիկոն. —Լուրեր։ Դէպքեր-դէպքեր։ Հայկական հնագիտութիւն։

Թղթակցութիւններ. — Նամակ Թիւրքիայից.—կ. Պոլիս։

Քաղաքական. — Քաղաքական Տեսութիւն։ Լուրեր։

Խառն Լուրեր.

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 1 ապրիլի 1888

ՄԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

—

Անցեալ մարտ ամսի 3-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվում էր սպանութեան մի գործ։ Հայ վկային երդմնեցնող քահանան բացակայ էր, թէպէտև իւր ժամանակին դատարանի դահլիճում գտնուելը նրա պարտաւորութիւնն էր։

Մենք այդ դէպքը արձանագրեցինք «Նոր-Դար»-ի 35-րդ համարում։ Մեզ յայտնի չէր այն ժամանակ հայ քահանայի անձնաւորութիւնը և նրանով չէինք կարող հետաքրքրուել. մեզ հետաքրքրողը գործն էր, այսինքն այն հանգամանքը, որ հայ վկան ստիպուած երդվում է վրաց քահանայի ձեռքով վրացերէն հայ քահանայի բացակայութեան պատճառով, թէպէտև Թիֆլիսում, փառք Աստուծոյ, հայ քահանաների սով չկայ։ Այս հանգամանքը և ոչ թէ քահանայի անձնաւորութիւնը ուշադրութեան արժանի համարելով, եղելութիւնը արձանագրեցինք առաջնորդողի մէջ։ Մենք կամենում էինք, որ այդ մասին հսկողութիւն լինի և հոգևոր իշխանութիւնը անուշադիր չթողնէ գործը։ Առ այժմ դատարանից մարտի 3-ին բացակայ գտնուող քահանան է, որ մեր գրածի վերայ ուշադրութիւն է դարձրել և մի բացատրական նամակով դիմել է Թերթիս խմբագրին։ Այդ նամակը ստորև հրատարակելուց առաջ հարկաւոր ենք համարում ընթերցողին յիշեցնել մի երկու խօսքով գործը այնպէս՝ ինչպէս արձանագրուած էր «Նոր-Դար»-ի մէջ։

Ռուս, վրացի, կաթոլիկ և այլ դաւանութեան պաշտօնեաները ներկայ են լինում մարտի 3-ին դատարանի դահլիճում, որպէս զի իրենց վերաբերեալ վկաներին երդմնեցնեն։

Հայ վկային երդմնեցնող չկայ, որովհետև քահանան բացակայ է. նրան որոնում են դատարանի մէս սենեակներում. դատարանը քսան վայրկեան սպասելուց յետոյ, նախագահը յայտնում է հայ վկային, որ գործը կը յետաձգուի, եթէ նա չհամաձայնուի մէս քրիստոնեայ քահանաներից մէկի ձեռքով տալու օրինական երդումը։ Հայ վկան իւր կողմից գործի յետաձգութեան պատճառ չլինելու համար, համաձայնվում է վրաց քահանայի ձեռքով տալու օրինական երդումը։

Որովհետև մեր գրածը անհերքելի եղելութեան վերայ էր հիմնուած, հայ քահանայի բացատրական նամակը ստանալով, մենք այնպէս էինք հաւատացած, որ նրա մէջ կը գտնենք մի հիմնաւոր կամ անհիմն պատճառաբանութիւն, որով քահանան աշխատում է իւր բացակայութիւնը արդարացնել։ Բայց որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ կարդացինք այդ բացատրական նամակը. վրդովուեցանք մենք մանաւանդ այն հոգուց, որով ներշնչուած է այդ հայ քահանայի ձեռքով գրած բացատրական նամակը։ Այդ բացատրական նամակի մէջ քահանան դրական ոչինչ չէ պատասխանում. չէ ասում, թէ բացակայ է եղել դատարանից, չէ ասում, թէ մեր լիշատակած հայ վկային երդմնեցրել է կամ չէ երդմնեցրել։ Նա իւր կողմից իւր պարտաւորութիւնը քողարկելու համար գիմում է Թերթիս խմբագրին հարցմունքներով, որով իրեն բոլորովին մերկացնում է և ակամայ ստիպում է մեզ ճանաչել նրան այնպէս, ինչպէս մենք նրան իրըև հայ քահանայի չէինք կամենալ որ ճանաչէինք։

Ահա այդ բացատրական նամակը, որ մենք չէինք կամենում հրատարակել, բայց նամակագրի յատուկ և կրկնակի խնդրանքի համաձայն, հրատարակում ենք.

«Լրագրիդ № 35-ի մէջ, առաջնորդող յօդուածով դիտողութիւնները ես արել եմ վերայ նահանգական դատարանի վերաբերմամբ. ուստի ճշմարտութիւնը երևան հանելու համար, խնդրեմ չնորհել մի անկիւն ձեր լրագրում։

ա) Որ մարտի 3-ին ես հրաւիրուած էի պալատում և նահանգական դատարանում։ Այդ օրը վարդանանց տօնն էր, մեր պատարագը վերջանալուց կինի, իսկոյն գնացի պալատ և այնտեղից նահանգական դատարան, ուր և նոյն օրը երդուեցրել եմ վկաներին և նշանակուած է (журналъ судебнаго засѣданія)-ում։

բ) Արդեօք ճըր է պատահել, որ քրիստոնեայ քահանաները (բացի ռուս) ուշ կամ չգալու պատճառով, դատարանը իւր նիստը ընդմիջէ և կամ ըսպասէ (այն էլ քսան վայրկեան) քահանայի գալուն, քանի որ օրէնքը թոյլ է տալիս նախագահին բոլոր կրօնի (բացի ռուս) պատկանող վկաներին երդմնեցնելու։

գ) Ե՞րբ է պատահել, որ նախագահը առաջարկէ վկային այսպիսի մի հարց թէ՝ «պ. վկայ. եթէ չհամաձայնէք երդուելու մի այլ քրիստոնեայ քահանայի ձեռքով, գործը պէտք է յետաձգուի»։

դ) Ասում էք՝ «Հայ վկան գիտնալով, որ սպանութեան գործի մէջ մեղադրուած հայ երիտասարդը, իւր չերդուելու պատճառաւ մի քանի ամիս դարձեալ բանտում պէտք է մընայ, մարդասիրաբար համաձայնվում է վրաց քահանայի ձեռքով երդուել»։ Ասացէք խնդրեմ, միթէ կայ այնպիսի մի օրէնք, որ ներկայացած վկային (Թող լինի նա ռուս, հայ, հելլանոս և այլն) երդման պատճառաւ գործ յետաձգուի։ Գէորգ քահանայ Գնունի»։

Արժ, Գէորգ քահանայ Գնունու բացատրական նամակը հրատարակելով, նրա արած հարցմունքների մասին մեր նկատողութիւնները կանենք միւս անգամ։ Առ այժմ հասկացող ընթերցողին ազատ ժամանակ ենք տալիս քննութեան առնելու այդ նամակը, երբէք մրտքից չհանելով այն հանգամանքը, որ դրա գրողը մի հայ քահանայ է։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կրկնելով խնդրում ենք նրանցից, որոնք մի որևէ գումար են պարտ խմբագրութեանս, շտապեն ուղարկել մեզ։ Երկար ժամանակից խմբագրութեանս պարտական մնացողը չպէտք է կարծէ, որ նրա պարտքը պէտք է մոռացուի։ Այսպիսի դէպքերում լռութիւն պահպանելն մի առանձին քաջութիւն չէ։

—

«Նոր-Դար»-ի անցեալ 41-րդ համարում, մայրաքաղաքի ռուս Թերթերից առնելով հաղորդեցինք մի քանի տեղեկութիւններ անցագրային նոր ծրագրի մասին, որի մէջ գլխաւոր նորութիւնը կազմում է անցագրային գրքոյկը։ Այժմ այդ գրքոյկի մասին նոյն Թերթերը հաղորդում են մանրամասնութիւններ։ Այսպէս, օրինակ, անցագրային գրքոյկների բլանկները պիտի պատրաստուին պետական դրամատհատարանի ձեռքով։ Գրքոյկի մէջ պէտք է մանրամասնաբար նշանակուած լինի գրքոյկը տրուելու տարեթիւն և ամսաթիւը. ով է տուել գրքոյկը. անցագիրը ստացողի մշտական բնակութեան տեղը, անունն ու ազգանունը, կոչումը, տարիքը, ամուսնացած կամ չամուսնացած լինելը, նրա ստորագրութիւնը՝ եթէ նա գրագէտ է և առանձին նշանները՝ եթէ նա անգրագէտ է։ Անցագրային գրքոյկ ստացողի ցանկութեամբ կարող են այնտեղ յիշուել և նրա կինը, որդիքը, նոյնպէս և իւր հետ ապրող ազգականները և որդեգիրները. բայց 18 տարեկան եղող տղամարդիկ կարող չեն իրենց ծնողների անցագրերի մէջ մտնել, բացառութիւն պիտի կազմուի միայն զառամեալների, կաղերի, կոյրերի, խուլ ու համրների համար, որոնք պիտի գրուին այն անձերի անցագրերի մէջ, որոնց հսկողութեան տակ գտնուում են։ Քաղաքացիներն ու գիւղացիները, անցագիր ստանալիս պարտաւոր են վճարելու իրենց վերայ եղող արքունի պարտքերը։ Եթէ անցագիրը կորսուի, նրա տէրը պէտք է քաղաքներում 24 ժամուայ ընթացքում, իսկ միւս տեղերում՝ 3 օրուայ ընթացքում այդ մասին իմաց տայ այն ոստիկանական կառավարչին, որի բաժնում ապրում է և պէտք է վճարէ մի անգամ այդ մասին լրագիրներում յայտարարելու վարձը։ Այդպիսի միջոցին ոստիկանական վարչութիւնը տալիս է յայտարարութիւն անցագրի տիրոջը այն մասին, թէ երեն յայտնուած է իւր ժամանակին այդ կորուստը, և տրվում է նոր անցագրային տետր։

—

Մերվիո.—Մարտի 21-ին էր կարծեմ, այստեղ մի Թուրք՝ Քեաբամ անունով քրիստոնէութիւն ընդունելով մկրտուեց ռուսաց եկեղեցական ծիսով. կնքահայրն էր գնդապետ Լինէեվիչը, որի անունով էլ մկրտուողը Լինէեվիչ անունն ստացաւ։ Նորադարձին ուղարկեցին արքունի միջոցներով Պետերբուրգ, ուր մտնելու է արքունի դպրոցներից մինը։ Պէտք է ասել, որ ռուսական ազդեցութիւնը բաւական զօրանում է, այսպէս օրինակ, նոր մկրտուած Լինէեվիչը բազմաց գալիս, նախ բարևում է ռուսերէն «զԹրասթի ըզնաքօմ» և այնուհետև արդէն շարունակում խօսքը «աչնա, սեզդա փերշաքա վաս,» և այլն։

—Առաւտուրը խիստ ընկած է. շաւերը Թափառում են պարապ, անգործ։

—

Շաբաթ օր, ապրիլի 2-ին պիտի կայանայ ազնուականական բանկի Թատրոնում երաժշտական-գրականական երեկոյթ բարեգործական նպատակով, որին, ինչպէս լսում է, մասնակցելու են Ֆօրկատիի խումբի մի քանի անդամները և, «Кав.»-ի ասելով, վրաց ու հայոց դերասանական խմբերի անդամներն ու Թատերասէրները։

—

ԵրեւԱՆԻՑ.—Առ հասարակ մեծ պասը ամենայարմար ժամանակ պէտք է համարել հրապարակական դասախօսութիւնների համար։ Հասարակութիւնն առ հասարակ այսպիսի օրերին աւելի տրամադիր է լինում լսելու ինչպէս Աստուծայ խօսքը, նոյնպէս և գիտութեան խօսքը։ Բայց մինչև այժմ չտիրօքեցին և ցաւալի երևոյթ պէտք է համարել այդ։ Ո՞ւր է մեր ինտելիգենտ համարուող դասակարգը։

Լրագիրներում բաւական գրուեցաւ և լուսաբանուեցաւ Երևանում մի լաւ ընթերցարան-գրադարան ունենալու կարևոր խնդիրը, բայց մեր ինտելիգենտները պեռ էլի շարունակում են իրենց Թմրածութիւնը։ Սովորաբար մեղանում մինչև և ստորին դասակարգը սիրում է հետևել, այսպէս ասած, բարձր դասակարգին. բայց ո՛ւր է մեր «բարձր դասակարգը», ինչ է մտածում. հեռուից գիտեն մեծ մեծ խօսել, իսկ գործ. երևի այդ իրենց գործը չեն համարում։

—

Թիֆլիսի դատական պալատի դատախազ՝ գաղտնի խորհրդական Անդրէեվսկուն բարձրագոյն հրովարտակով հրամայուած է անդամակցել պետական սենատին։

—

ԲԱԹՈՒՄՈՒՄ, մարտի 25-ին կայացել է Բաթումի քաղաքային ուսումնարանի մօտ հիմնուող արհեստանոցի հիմնարկութեան հանդէսը։ Այդ արհեստանոցը յարմարեցրած է տեղական արհեստագիտական ուսումնարանին, ուր սովորում են 10 գիշերօթիկ աշակերտներ և 12 հոգի էլ երթևեկ աշակերտներ։ Այդ աշակերտները 12 տարեկան ժամանակից մըտնելով ուսումնարան, հինգ տարուայ ընթացքում սովորում են, «Кав.»-ի ասելով, հիւսնութիւն և երկաթագործութիւն։

—

Ահա քանի տարի է, որ Թիֆլիսում գոյութիւն ունի վելօսիպէդ սիրողների մի խումբ, որոնք վաղուց է մտածում են հիմնել իրենց սեփական կլուբը, բայց մինչև այժմ ինչ-ինչ պատճառներով այդ բանը գլուխ չէ եկել։ Իսկ այժմ, վելօսիպէդասէրներն արդէն կազմել են կլուբի կանոնագիրը և, ինչպէս հաղորդում են տեղական ռուս Թերթերը, շուտով ներկայացնելու են հաստատութեան։

—

Ներկայ յունվարի 20-ին Թիֆլիսի մաքսատանը, Մխիթարեվի Լազարեվի, Թօմազովի, Ֆարաջուլի և Աբոյեմ Սահակեանցովի գրուած ապրանքների ճանապարհից առաջացել է 19,000 ր.։ Այդ գումարը, որի համարեա կէսը պետական գանձարանին հաշուելով, որպէս վարձատրութիւն, «Кав.»-ի ասելով, պիտի բաժանուի մաքսային այն ծառայողներին, որոնց չնորհիւ մաքսանենգութիւնը գտնուած է։

ԴԷՍԻՑ-ԴԷՆԻՑ

—

Այն՝ ինչ որ ուրիշ ազգերի մէջ որպէս անբաւոյականութիւն պախարակվում է, մեր մէջ մի քանի կարճամիտ հրապարակախօսների համար դա կազմում է պուբլիցիստիական գործունէութեան raison d'être-ներից մինը։ Ուրիշ, աւելի զարգացած ազգեր նորանոր միջոցներ են առաջարկում բնկերական սկզբունքը ժողովրդի մէջ աւելի և աւելի տարածելու, ամրացնելու համար, մեզանում ուղիղ գրա հակառակն են անում՝ քայքայելով այդ սկզբունքը։ Շատ անգամ կարելի է մեր մէջ լսել թէ մասնաւոր խօսակցութիւնների և թէ հրապարակախօսութեան միջոցներին, գովեստներ հայ նահապետական ընտանիքի մասին։ Այդ մասին իրենց զարմացքն են յայտնել և այն յայտնի եւրոպական գիտնականները, որոնց խօսքերի վերայ սովորաբար յենում են մի որոշ կարգի հրապարակախօսներն իրենց մտքերը՝—հաստատ, տեղական ոչինչ աղբիւրի հետ ծանօթութիւն չունենալու պատճառով։ Ինչ է այդ գովեստը հայ նահապետական ընտանիքի մասին՝—որովհետև բոլորն էլ համաձայն են գէթ այն բանում, թէ ընտանիքը ընկերավարական այն կենդանի և բարձրագոյն կազմակերպութիւնն է, որ երբ և իցէ ստեղծել է մարդկութիւնը... Հետևաբար, քանդել նրան՝ մանաւանդ երբ դա հաստատուած է բարոյական բարձր սկզբունքների վերայ, նշանակում է անբարոյականութեան ուղի բաց անել, քանդել քաղաքակրթութեան մի կենդանի և ամենագլխաւոր ուղին, որով պիտի վերակազմուի հին հասարակու-

*

Ասում անգամ լրագրների հայրենասիրական ոգևորությունը ևս ոչ մի ազդեցություն չունի ռուսահայ ազգաբնակչության վրա։ Ինչպես ասացինք, ռուսահայ ազգաբնակչությունը ոչ մի կապ չունի ռուսական հասարակության հետ, ոչ մի կապ չունի ռուսական պետության հետ։ Ռուսահայ ազգաբնակչությունը ռուսական պետության համար ոչ թե միայն օտար է, այլև թշնամի։ Ռուսահայ ազգաբնակչությունը ռուսական պետության համար ներքին թշնամի է, որովհետև ռուսական պետությունը ռուսահայ ազգաբնակչության համար ներքին թշնամի է

Ի. ՓՈԼԻՆ, 20 մարտ («Նոր-Դար»-ի թղթակցից)։— Ինչպես հայտնի է ձեզ, մեր քաղաքում ևս հաստատվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուպատոսական գործակալությունը։ Հյուպատոսական գործերը վարում է պարոն Ջեյմս Ռոբերտսը։ Նա ծնունդով ամերիկացի է, բայց ծնվել է Հնդկաստանում, որտեղ նրա հայրը եղել է միսիոներ։ Ռոբերտսը տիրապետում է հնդկերեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և հայերեն լեզուներին։ Վերջինս նա սովորել է Պարսկաստանում, ուր ծնողները նրան ուղարկել էին 1849-ին։ Ես եղա ս. Փրկչի եկեղեցում, երբ նա ներկայացավ Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուպատոսական գործակալության (consulate) փոխ-հյուպատոսական պաշտոնում։ Ներկա էին նաև տեղական բոլոր պաշտոնյաները, որոնք, երբ նրանց ներկայացրեցին հյուպատոսին, ողջունեցին նրան ջերմ ծափահարություններով։ Ռոբերտսը ելույթ ունեցավ անգլերեն լեզվով, որը թարգմանվեց հայերեն։ Նա ասաց, որ ինքը ոչ միայն ամերիկացի է, այլև հնդիկ, քանի որ ծնվել է Հնդկաստանում։ Նա հայտնեց, որ ինքը ոչ միայն ամերիկյան, այլև հնդկական շահերի պաշտպանն է։ Ապա նա ասա

Մեծ պետութիւնները այնքան չատ են քանդել Բերլինի դաշնագիրը, որ հազիւ թէ կարողանան սուլթանին հրաւէր կարդալ այդ դաշնագիրը կատարելու։

Բացի այս խնդիրներից, Թիւրքիային բաւական անհանգստացնում են և զինեալ քուրդերի յարձակումները Փոքր-Ասիայում։

*

Արդէն հեռագիրը մեզ հաղորդեց, որ ռուսական կառավարութիւնը հրամայ ուղարկել է մի պատուիրակ՝ Իզվոլսկի Թագաւորը կայսրի առանձին նամակով պապին, որպէս զի բանագնացութիւնները սկսի Վատիկանի (պապի) հետ։ Արդէն յայտնի է, որ պ. Իզվոլսկին ժամանելով Հռոմ, նամակը յանձնել է, ոմանց ասելով, պապի քարտուղար կարդինալին և ոմանց ասելով՝ պապին։ Այնուհետև դեռ ևս յայտնի չէ, թէ բանագնացութիւնները ինչ հետևանքի են հասցրել։ Ասում են, որ բանակցութեան նպատակը հետևանքի հասնելուց յետոյ, Վատիկանում Իզվոլսկին պիտի նշանակուի Ռուսիայի դեսպան։

Սակայն պապի հետ բանակցութիւնները սկսել են նոյնպէս և Ֆրանսիան և Անգլիան։ Ֆրանսիան, չնայելով իւր բոլոր հին եռին, անկարող է զգում իրեն առանց պապի աջակցութեան գործել քաղաքական ասպարիզի շատ կէտերում, մանաւանդ Արևելեան և Արևելքի խնդիրներում։ Իսկ Անգլիան էլ կարօտ է նրան՝ որովհետև հարկաւոր է վերջապէս իրլանդական խնդրին վերջ դնել։ Արդէն յայտնի է, որ պապը Իրլանդիա ուղարկել էր իբր իւր ներկայացուցիչ կարդինալ Պերսիկոին, որ հանգամանքից օգտուելով և պապի աջակցութիւնն Անգլիայի համար աւելի ևս կարևոր կացուցանելու համար, ամեն մի կողմից գործ դրեց իրլանդացիների զգացումները դէպի պապական գահը աւելի ևս ջերմացնել, և ահա նա ճանաչեց իրլանդացիների պահանջների արդարութիւնը և նոյնը զեկուց պապին։ Անգլիան այդ բանի վերայ ուղարկեց Նոր-Ֆոյլկին Հռոմ պապի յօրելեանը շնորհաւորելու և բանակցութիւնները նորոգելու համար, բայց աջողութիւն չունեցաւ նա։ Անգլիան, ինչպէս երևում է եւրոպական մամուլի մէջ շրջող լուրերից, կրկին սկսել է պապի հետ բանակցութիւնները, բայց որոնց ինչ բնաւորութիւն ունենալու մասին ոչինչ յայտնի չէ։

Չէ կարելի չնկատել, որ պապի հետ բանակցողները այն պետութիւններն են, որոնք չեն պատկանում Մինչեւ եւրոպայի եռասպետական դաշնակցութեան։ Երբ իշ. Բիսմարկը անցեալ տարի սկսեց բանակցութիւններ պապի հետ և նրան մի քանի զիջումներ արեց, մենք այն միտքն էինք յայտնել, որ դա մի խաղ է Բիսմարկի կողմից նպատակներին հասնելու համար։ Այն միջոցին, երբ պապը գլխաւորապէս յոյս ունէր օգնութիւն ստանալու Գերմանիայից՝ իտալական կառավարութեան դէմ սկսած ներքին մի քանի խնդիրներում, մանաւանդ պապական աթոռը անկախ դարձնելու և աշխարհական իրաւունքները վերականգնելով Հռոմն էլ պապի սեփականութիւն դարձնելու խնդրում, մնում է բոլորովին միայնակ։

Մարդ ակամայ այստեղ յիշում է մեր մի կարգ հեռատես հրապարակախօսների քարոզները, որոնք տասնեակ տարիներով լսվում էին, թէ պապի աթոռը խորտակուած է, գօրութիւնը ոչնչացած, նշանակութիւնը բոլորովին կորցրած։

Պապի իրաւունքը քանի գնում կարծես աւելի և աւելի զօրանում է, թէև չենք բացատրում, որ նրա աշխարհական այժը մի ժամանակից պիտի ոչնչանայ և նոյն իսկ այժմ ևս չունի իւր նախկին զօրութեան կէսը։

*

Իտալական կառավարութիւնը պապի դէմ սկսած կռիւը չարունակում է անյողդողդ և ոչ մի առիթ չէ փախցնում ցոյց տալու, որ ոչ մի քայլ զիջումն չէ անիլ այնպիսի ուղղութեամբ, որ վնասէր Իտալիայի միութեան գործին։

Սակայն Իտալիան այժմ կապուած է մի այնպիսի գործով, որից ապատուել Թէև կցանկար, բայց ելք չկայ։ Նախկին, հանգուցեալ Դէպրետիսի մինիստրութեան մէջոցին սկսելով արշաւանք Հաբէշստանի դէմ և մի քանի պարտութիւններ կրելով, Իտալիան, ակամայ, իւր վարկը բարձրացնելու և ազդեցութիւնը վերականգնելու համար ստիպուած է անպատճառ չարունակելու արշաւը։ Հաբէշստանը փոքր երկիր չէ. նրա թագաւորը ահագին բանակով ճակատել է իտալական ամրութիւնների դէմ Ադբելկայում և բանակցութիւն է սկսել իտալական զօրքերի հրամանատարի հետ։ Հեռագիրը Թէև մեզ հաղորդեց, որ բանակցութիւնները աջող ելք չեն ունեցել, բայց գործը խաղաղութեամբ վերջացնելու բոլոր յոյսերը կորած չեն դեռ։ Ասում են, Հաբէշական բանակը քանի գնում Թուլանում է, իսկ Իտալիան էլ կցանկանար իւր ոյժերը Աֆրիկայից փոխադրել Եւրոպա, ուր գուցէ աւելի կարևոր գործադրութեան պէտք լինին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ.—Բուլանժէի կուսակիցները պնդում են, որ Ֆլօկէն չուտով առաջարկելու է Բուլանժէին զինուորական մինիստրութիւնը։

—Ֆրանսիական, գերմանական և առ հասարակ եւրոպական մամուլը քննելով Ֆրանսիայում պատահած վերջին դէպքերը, այն եզրակացութեան է գալիս, որ Ֆրանսիական նոր մինիստրութիւնը կարող չէ երկարատև լինել։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Գերմանական մամուլն այժմ ամբողջապէս զբաղուած է իշ. Բիսմարկի հրաժարականի խընդրով։ Գերմանական քաղաքականութիւնն այնպիսի ուղղութիւն է ստացել, նրա յարաբերութիւններին ուրիշ պետութիւնների հետ մի այնպիսի ուղղութիւն է տրուած, որ հազիւ Թէ կարելի լինի առանց Գերմանիան իւր դրութիւնն վտանգելու փոփոխութիւն մըտցնել դրանց մէջ, մանաւանդ այդ աւելի վտանգաւոր կը դառնայ, երբ իշ. Բիսմարկը կը հեռանայ գործերից։ Ահա Թէ ինչի այսօր ամբողջ Գերմանիան լարուած ուշադրութեամբ հետևում է իշ. Բիսմարկի հրաժարականի խնդրին։ Մարտի 25-ին իշ. Բիսմարկը երեք ժամ չարունակ տեսակցութիւն է ունեցել նաև գերմանական կայսերական զոյգի հետ և ապա միայն կայսրուհու հետ։ Այդ միջոցին Բիսմարկը մանրամասնաբար զեկուցել է այն անհնարին, կամ գոնէ դժուարին գործութիւնը, որի մէջ կլինի Գերմանիան, համաձայնելով Ֆրիդրիխ III-ի աղջկայ՝ Վիկտորիա պրինցէսսի ամուսնութեան Բատենմերգեան Ալէքսանդր պրինցի հետ, որ Բուլղարիայի նախկին իշխանն էր։

ԻՏԱԼԻԱ.—Իտալական կառավարութիւնը, ինչպէս երևում է «Հավասի գործակալութեան» հաղորդած տեղեկութիւններից, Հաբէշական նէգուսին առաջարկել է հեշտութեան համար հետևեալ պայմանները։ 1) Յովաննէս Թագաւորը (Հաբէշստանի նէգուսը) պէտք է Թողնէ իւր բռնած գիրքը։ 2) Բացի այն հողերից, որ ներկայումս տիրապետում է Իտալիան, պէտք է միանան և այն հողերը, որոնք անհրաժեշտ են Մուսավայի ապահովութեան և արշաւանքի համար առողջական կայարանները հիմնելու համար։ 3) Հաբէշական կառավարութիւնը ապահովում է առևտրի ազատութիւնն ու իտալացի Հանապարհորդների ապահովութիւնը։

Այս առաջարկներին նէգուսը պատասխանել է, որ առ այժմ կարող չէ ընդունել դրանց։

ԲՈԼՂԱՐԻԱ.—Սոֆիայից հաղորդում են, որ բոլղարական զօրքերի մէջ Ձեռքից Ձեռք ման են գալիս հրաւէրներ, որոնց մէջ խորհուրդ են տալիս պրինց Ֆերդինանդին արտաքսել երկրից։ Սպասում են, որ ծանր անկարգութիւններ կը ծագեն չուտով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ ուսումնարական տարուց Պետերբուրգի կայսերական Թատրոնի վարչութիւնը բանալու է դրամատիկական ուսումնարան, երեք դասարանական դասընթացքով, ուր ընդունելու են 17 տարեկան տղաներ և 16 տարեկան աղջիկներ, 100 րուբլի տարեկան վճարով։

***

Դժուարամարս կերակուր.—Յայտնի է, որ կան մարդիկ, որոնք մեծ բաւականութիւն են զգում կիր, ածուխ, կաւիճ, նոյնպէս և գրելու Թուղթ ուտելը։ Շվէդական պատմաբան Ատտերբօմը պատմում է, որ Շվէդիայի յայտնի պետական անձերից մինը, խստ յուզուած կամ խոր մտածութեան մէջ եղած մի ջոջերն սովորութիւն ունէր ատամներով կարտելու մագաղաթը և ծամելով, կուլ տալ։ Այդպէսով նա մի անգամ ոչընչացրեց պետական մի նշանաւոր գոկումէնտ, որը չետոյ պիտարում էին։ Սակայն եղել են օրինակներ, որ մարդիկ ակամայ էլ են Թուղթ կուլ տուել։ Այսպէս, օրինակ, XVII դարի սկիզբներում, մի գերմանական ժամանակագիր, գերմանական հերցոգների մասին խիստ կարծիքներ յայտնելուն համար, բաւական դատարանով դատապարտուել էր, դատաւորների ներկայութեամբ, ուտելու իւր հեղինակութեան մի ամբողջ Թերթը, որի մէջ հերցոգների մասին կարծիք էր յայտնուած։ Շվեդերէնը իւր «Geschichte des Papsthum» գրքի մէջ հաղորդում է, որ նոյնպիսի մի դէպք էլ պատահել է Ուրբանոս V-րդ պապին 1360 Թուականին։ Երբ նա դեռ կարդինալ էր, նրան յանձնարարել էին այն ժամանակուայ ամենահզօր Միլանի հերցոգ Բերնաբօ Վիսկոնտիին մասուցանելու նրա նախորդներից մինի հին նամակներից մինը։ Բայց, ինչպէս երևում է, նամակի բովանդակութիւնը այնքան նպաստաւոր չէ եղել Միլանի բռնակալի համար, որովհետև կարդալով նամակը և զայրանալով, նա հենց տեղն ու տեղը հրամայում է, իւր ներկայութեամբ կուլ տալու նամակը, որպէս զի նրա հետքն անգամ չմնայ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 31 Մարտ։—Սենատը երկրորդ անգամ փոխեց Թիֆլիսի դատական պալատի վճիռը Անտօնովի և Ղորղանովի գործի մասին, 928-րդ յօդուածի խանգարման պատճառով և որոշեց գործը նորից քննելու համար յանձնել նոյն պալատին ուրիշ կազմութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 Ապրիլ.—Պետական խորհրդին ներկայացրած է մի նախագիծ նաւագնաց գետերով բերուող ապրանքներից առնուող քաղաքային տուրքերի բարձման մասին։ Տուրք վերցնելը մտադրուած է միայն մինչև 1893 թիւը. այդ թուից յետոյ նուազացնել տուրքի չափը 1/3 մասով իւրաքանչիւր հինգ տարին։

Նախագծվում է Թուրքեստանի և Սիմերէչենեան երկիրներում ևս գործադրելու ծխախոտային օրէնքները մի քանի փոփոխութիւններով, որոնք առաջանում են երկրի առանձնայատկութիւններով։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

ԱՆՎՏԱՆԳ

ՇՎԵԴԱԿԱՆ

ԼՈՒՑԿԻՆԵՐ

(ШВЕДСКІЯ СПИЧКИ)

Կատարելագործուած, սպիտակ բոցով, ամենաէժան գներով։ Մեծ քանակութեամբ առնողներին մեծ զիջումն է լինում։

ԴՈՐԾԱՐԱՆ Դ. Բ. ՏԷՐ ԱՍՏՈՒՐՈՎ ԵԻ ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍ. Վերայում.

50—40

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը խոնարհաբար խնդրում է իւր անդամներին շնորհ բերել ներկայ լինելու Ընկերութեան ընդհանուր ժողովի նիստին, որ լինելու է ապրիլի 3-ին, կիրակի, առաւօտեան 11 ժամին, Ս. Նշան եկեղեցու ուսումնարանի դահլիճում։

Ժողովի պարապմունքներն են՝

Ա. Ընկերութեան անցեալ 1887 թ. ելևմտից հաշուի և առաջիկայ 1888 թ. նախահաշուի քննութիւնն ու հաստատութիւնը։

Բ. Վարչութեան առաջարկի քննութիւնը՝ կար ու ձևի դպրոց բանալու մասին։

Գ. Վարչութեան հերթով դուրս եկող երեք անդամների փոխարէն նոր անդամների և կանդիդատների ընտրութիւնը։

(Խ.) 2—2

ՌՅԻՒԿ ՄԻՍԱՒՐ ԸՐԱՄԵՆՑ

ՍԱԼԻՆՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Նկարագիր

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒԳԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բազմաթիւ փոփոխութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դարի» խմբագրութեան։ (Ա.) Ռ—15

Խնդրում ենք բոլոր այն անձերին, որոնց մօտ գտնվում են մեր հրատարակութիւնները, շտապեն շուտով հասցնելու մեզ այդ գրքոյկների գինը և չվաճառուած օրինակների հաշիւը։

Մինչև այսօր լոյս են տեսել հետևեալ գրքոյկները.

1) Բուլղար աւազակապետ . . . . . 5 կոպ.
2) Ուրիշի գերեզմանի վերայ առանց սրտաստւքի են լայ լինում . . . . . 5 »
3) Ծաննա դ'Արք . . . . . 3 »
4) Նեդա. . . . . 5 »
5) Դօնչօ . . . . . 5 »
6) Վիլհելմ Տելլ . . . . . 5 »
7) Գաղթական (Մշոյ բարբառով)—նշանակուած է միմիայն Տարօնում և Վասպուրականում ձրի տարածելու համար։

Մինչև յուլիս ամիսը լոյս կը տեսնեն այլ ևս հինգ նոր գրքոյկներ։

Այդ հրատարակութիւններից մինչև այսօր տարածուած է մօտ 62,000 օրինակ Ռուսիայում, Թիւրքիայում և արտասահմանում, այնպէս որ հինգ համարներից մնում է միայն մի քանի հարիւր օրինակ։

Այն գրավաճառները, որոնք ցանկանում են ստանալ մեր հրատարակութիւններից, թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէով.

С. Петербургъ, студенту Имп. Военно-медицинской Академіи Татевосу Захарянцъ.

Ուսանողները խնդրում են նաև բոլոր մեր հրատարակիչներից և հեղինակներից ուղարկել մի-մի օրինակ իրենց աշխատութիւններից ուսանողական ընթերցարանի համար։ 3—2

Ի ՍԿԱԿԱՆ Է ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՅՍ ԴՐՈՇՄՈՎ ՄԻԱՑՆ

Մ Ի՛ Հ Ա Զ Ի Ր

Մեղրա-Բուսեղէն-Մայլց-Էկստրակտ և չաքարեղէններ։

Լ. Գ. ՊԻՇՏ ԵԻ ԸՆԿ. ԲՐՒՍԱՎՈՒՄ

Գինն է,—մի շիշը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. չաքարեղէնները 30 և 50 կոպէկ։

Գլխաւոր պահեստն է Ռուսիայի համար՝ Պետերբուրգ, Վ. Աուբլեի մօտ, Բոլշ. Մօրսկայա, № 17.

Վաճառվում է,—Թիֆլիսում, զեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութիւն, և Վ. Գրիվնակ, Ճանապարհածախսը առանձին (М. 4852) 32—23

Լոյս կը տեսնի 1888-ին առանձին գրքով

Գ. ՉՈՒԲԱՐԻ

ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ

ՄԻ ՎԱՐԻՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՓԵՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ

երկերը միասին։ Բաժանորդագրինը 1 ր–ի է ընդամենը։ Բաժանորդագրուել կարելի է միմիայն «Նոր-Դարի» խմբագրատունը։ Օտար քաղաքներից դիմում են «Նոր-Դարի» խմբագրութեանը այսպէս. Тифлисъ, въ редакцію ежедневной армянской газеты «Норъ-Даръ».

(Խմ.) X—42

Дозволено цензурою. Тифлисъ, 1-го Апрѣля 1888 г. Տպարան Լ. Գ. Կրամարէնկոյի Типографія Л. Г. Крамаренко, Гол. пр., д. Читахова.